ԵԴ/0846/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6 դեկտեմբերի 2022 թվական քՍ.Երևան

Ուսումնասիրելով թիվ ԵԴ/0846/01/22 քրեական գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի հունիսի 2-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 10950821 (ԵԴ/0846/01/22) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արսեն Համլետի Գալստյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 131-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով և Գեղամ Նորիկի Հովսեփյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-131-րդ հոդվածի 1-ին մասով և 38-175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով, և 2022 թվականի հունիսի 3-ի որոշմամբ ընդունվել է նույն դատարանի վարույթ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 14-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ

ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. 2022 թվականի հունիսի 17-ին քրեական գործն ընդունվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթ, և 2022 թվականի հունիսի 21-ի որոշմամբ նշանակվել է դատական քննության:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները</u>.

5. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Արսեն Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա Գեղամ Հովսեփյանի օժանդակությամբ՝ խաբեությամբ և բռնության գործադրմամբ բացահայտ առևանգել է Համիդ Սաիդոլաի Ռուստամիսաբզիին և որպես զենք օգտագործվող առարկայի՝ դանակի գործադրմամբ ավազակային հարձակման եղանակով վերջինիցս հափշտակել է խոշոր չափերի՝ 444.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույք և 127.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

Արսեն Համլետի Գալստյանը, 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Երևան քաղաքի Մարգարյան փողոցի 6-րդ հասցեում գործող «Արմենիա» բժշկական կենտրոնի բակում տեսնելով Համիդ Սաիդոլաի Ռուստամիսաբզիին և նրա երգելուց ու խոսալուց, հասկանալով, որ վերջինս արտասահմանցի է, օգտվելով նրա հայերեն լեզվի չիմացության հանգամանքից խաբելով և բռնություն գործադրելով՝ ձեռքից քաշելով ու հրելով Համիդ Սաիդոլաի Ռուստամիսաբզիին՝ նրա կամքին հակառակ, նստացրել է Գեղամ Հովսեփյանի՝ «Օպել» մակնիշի 36 065 հաշվառման համարանիշի՝ որպես տաքսի վարած ավտոմեքենայի հետևի նստատեղին, նստել կողքն և Գեղամ Հովսեփյանին

հրահանգել իր նշած երթուղով վարել ավտոմեքենաան, ինչը վերջինս կատարել է, այդ կերպ վերջինիս օժանդակությամբ Համիդ Սահդոլահ Ռոստամիսաբզիին այդ պահին դուրս հանելով բնական միկրոսոցիալական միջավայրից՝ Երևան քաղաքի Մարգարյան 6 հասցեում գործող «Արմենիա» ՀԲԿ-ի տարածքից և բացահայտ առևանգել է նրան և ուղևորվել են դեպի Վաղարշապատ քաղաք:

Ճանապարհին՝ Գեղամ Հովսեփյանի կողմից ավտոմեքենան վարելու ընթացքում, Արսեն Գալստյանը ավազակային հարձակման եղանակով Համիդ Սահդոլահ Ռոստամիսաբզիից հափշտակություն կատարելու դիտավորությամբ հարվածներ է հասցրել նրան, վերջինիս կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, որպես զենք օգտագործվող առարկայի՝ դանակի գործադրմամբ՝ այն է դանակը պահելով Համիդ Սահդոլահ Ռոստամիսաբզիի պարանոցի (կոկորդի) հատվածում հափշտակել է խոշոր չափերի՝ 444.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ «Քսիաոմի-Հ-3» մոդելի բջջային հեռախոս, ծխախոտ, կրակայրիչ, բաճկոն, արծաթյա 2 վզնոցներ և 127.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, որից հետո Համիդ Սահդոլահ Ռոստամիսաբզիին իջեցրել են Էջմիածին-Երևան ավտոմայրուղու թիվ 2-րդ բենզալցակայանի մոտ և դիմել փախուստի»[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 14-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված սահմանված հանցագործությունը համարվում է տևող հանցագործություն, քանի որ դրա օբյեկտիվ կողմն են կազմում այն գործողությունները, որոնք դրսևորվում են մարդուն՝ նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով և մշտական կամ ժամանակավոր բնակության վայրից այլ վայր տեղափոխելով ու այնտեղ պահելով: Թեպետ քննարկվող հանցակազմը ձևական է և ավարտված է համարվում մարդուն առևանգելու՝ նրան փաստացի տիրանալու և այլ վայր տեղափոխելու ու այնտեղ պահելու պահից, սակայն որպես տևող հանցագործություն, դրա կատարման վայր է հանդիսանում այն վայրը, որտեղ տուժողն ազատ է արձակվել:*

---

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 321-322:

(…)

Սույն քրեական գործով մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների փաստական նկարագրից երևում է, որ իբրև խաբեությամբ և բռնության գործադրմամբ բացահայտ առևանգվել է Համիդ Սահիդոլահ Ռուստամիսաբզին, ուղևորվել են դեպի Վաղարշապատ քաղաք և նա իջեցվել է Էջմիածին-Երևան ավտոմայրուղու թիվ 2-րդ բենզալցակայանի մոտ:

Բացի այդ. տուժողի մասնակցությամբ իրականացված դեպքի վայրի զննության արձանագրությունից երևում է, որ վերջինս մատնացույց է արել այն վայրը, որտեղ իրեն ավտոմեքենայից իջեցրել են, ինչպիսի վայրը քննիչի կողմից արձանագրվել է Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամաս:

Բացի այդ. տուժողն իր ցուցմունքով նկարագրել է նաև ավազակությամբ իրենից հափշտակության կատարումը և հայտնել է, որ ճանապարհին նկատել է այն վայրը, որտեղ բնակվում է, այսինքն Փարաքար գյուղը, իսկ այդ վայրը անցնելուց հետո այդ տղամարդը իր հագից հանել է նաև 80.000 ՀՀ դրամ արժողությամբ բաճկոնը:

Վերը նկարագրված հանգամանքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների շրջանակում նշանակում է, որ Ա.Գալստյանի և Գ.Հովսեփյանի ենթադրյալ հանցանքների կատարման վայրը հանդիսանում է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը:

Այսպիսով, վերը նշված պատճառաբանությամբ Դատարանը գտնում է, որ գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ ընդդատյա է ՀՀ Արմավիրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[2]*:*

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշման համաձայն. «*(…) [Դ]ատարանն արձանագրում է, որ գործի նյութերից հստակ չի երևում, թե ենթադրյալ ավազակային հարձակումը որտեղ է կատարվել, որպիսի հանգամանքը կարող է*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 49-56:

պարզ դառնալ միայն դատաքննության ընթացքում՝ ապացույցների հետազոտման ժամանակ:

(…)

Ըստ առաջադրված մեղադրանքի՝ Արսեն Գալստյանը խաբելով և բռնություն գործադրելով՝ ձեռքից քաշելով և հրելով Համիդ Սահդոլահ Ռոստամիսաբզիին դուրս է հանել իր բնական միկրոսոցիալական միջավայրից՝ Երևան քաղաքի Մարգարյան 6 հասցեում գործող «Արմենիա» ՀԲԿ-ի տարածքից, նստեցրել է Գեղամ Հովսեփյանի՝ «Օպել» մակնիշի 36 065 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետևի նստատեղին, նստել է կողքը և Գեղամ Հովսեփյանին հրահանգել է իր նշած երթուղով վարել ավտոմոբենան, ինչը վերջինս կատարել է:

Ելնելով վերոգրյալից Դատարանն արձանագրում է, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի տարածքում: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0846/01/22 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

---

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 228-234:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

11. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

2. Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը»:

Տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս **հանցանքի կատարման վայրը**:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են [պատանդ վերցնելու] հանցագործության հատկանիշները՝*

(…)»:

12.1. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է անձին իր կամքին հակառակ կամ առանց իր կամքը հաշվի առնելու գաղտնի կամ բացահայտ բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով, այլ վայր տեղափոխելով և այնտեղ պահելով:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Ա.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Երևան քաղաքի Մարգարյան փողոցի 6-րդ հասցեում գործող «Արմենիա» բժշկական կենտրոնի բակի տարածքում Հ.Ռոստամիսաբզիին նստեցրել է Գ.Հովսեփյանին պատկանող ավտոմեքենան, որից հետո ուղևորվել են դեպի Վաղարշապատ քաղաք: Ճանապարհին Ա.Գալստյանը ավազակային հարձակման եղանակով Հ.Ռոստամիսաբզիից կատարել է խոշոր չափերի հափշտակություն, որից հետո վերջինիս իջեցրել են էջմիածին-Երևան ավտոմայրուղու թիվ 2-րդ բենզալցակայանի մոտ և դիմել փախուստի[7]:

- Դեպքի վայրի զննության 2022 թվականի դեկտեմբերի 2-ի արձանագրության համաձայն՝ տուժողին ավտոմեքենայից իջեցնելու վայր է հանդիսացել Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասը[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 14-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին՝ հիմքում դնելով այն, որ Հ.Ռոստամիսաբզը ավտոմեքենայից իջեցվել է Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի տարածքում[9]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ թիվ ԵԴ/0846/01/22 քրեական գործն ընդդատյա չէ իրեն, պատճառաբանելով, որ գործի նյութերից հստակ չի երևում, թե ենթադրյալ ավազակային հարձակումը որտեղ է կատարվել: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ ըստ առաջադրված մեղադրանքի՝ Ա.Գալստյանը խաբելով և բռնություն գործադրելով Հ.Ռոստամիսաբզիին դուրս է հանել իր բնական միկրոսոցիալական միջավայրից՝ Երևան քաղաքի Մարգարյան 6 հասցեում գործող «Արմենիա» ՀԲԿ-ի տարածքից[10]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 32-37:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ենթադրյալ առևանգման դեպքն ավարտվել է Էջմիածին-Երևան ավտոմայրուղու թիվ 2-րդ բենզալցակայանի մոտ, որը, ըստ գործի նյութերի, գտնվում է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի տարածքում: Հետևաբար, Ա.Գալստյանին և Գ.Հովսեփյանին մեղսագրված վերոնշյալ ենթադրյալ հանցավոր արարքներն ավարտվել են Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումները՝ գտնում եմ, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0846/01/22 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և համաձայն 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/0846/01/22 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արսեն Համլետի Գալստյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով և Գեղամ Նորիկի Հովսեփյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-131-րդ հոդվածի 1-ին մասով և 38-175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ կետերով ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ